



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ 14 (305) 31.08.2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
182	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 19-ի N 293-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 492-Ն որոշումը.....	2
183	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» ԼՂՀ կառավարության N 499-Ն որոշումը.....	5
184	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 900-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 500-Ն որոշումը.....	7
185	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 501-Ն որոշումը.....	9
186	«Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության N 502-Ն որոշումը.....	15
187	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 261-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 262-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 663-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 503-Ն որոշումը.....	21
188	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 722 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 504-Ն որոշումը.....	22
189	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված կամ մահացած կամ անհայտ կորած կամ հաշմանդամ ճանաչված՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող անձանց մասին» ԼՂՀ կառավարության N 505-Ն որոշումը.....	26
190	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 889-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 506-Ն որոշումը.....	28
191	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 28-ի N 280 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 507-Ն որոշումը.....	29

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2016թ.

N 492-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 19-Ի N 293-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 19-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության պետական բուհերում նպատակային անվճար տեղերի արդյունավետ օգտագործման մասին» N293-Ն որոշմամբ հաստատված՝

- 1) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.
- 2) N 3 հավելվածն ուժը կորցրած ճանաչել.
- 3) N 4 հավելվածում՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է կազմակերպել Դիմորդի մասնագիտացումը _____

(ուսումնական հաստատության անվանումը)

(այսուհետ Ուսումնական հաստատություն) _____

(մասնագիտության անվանումը)

մասնագիտությամբ նպատակային պետական պատվերի շրջանակներում, իսկ Դիմորդը պարտավորվում է ուսումնական ավարտելուց և ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո աշխատանքային պայմանագիր կնքել Նախարարության առաջարկած պայմաններով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, իսկ պահանջարկ չլինելու դեպքում՝ քաղաք Ստեփանակերտում գործող բժշկական կազմակերպության հետ՝ հինգ (5) տարի ժամկետով:»,

բ. 3-րդ կետի 2-րդ ենթակետի «դիպլոմ ստանալուց» բառերը փոխարինել «դիպլոմ ստանալու» բառերով,

գ. 3-րդ կետի 3-րդ ենթակետի «5-րդ կետի 5-րդ ենթակետով» բառերը փոխարինել «5-րդ կետի 4-րդ ենթակետով» բառերով,

դ. 4-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1) իր հայեցողությամբ (հնարավորության առկայության դեպքում հաշվի առնելով Դիմորդի ցանկությունը) ընտրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, իսկ պահանջարկ չլինելու դեպքում՝ քաղաք Ստեփանակերտում գործող ցանկացած բժշկական կազմակերպություն, որի հետ պետք է աշխատանքային պայմանագիր կնքի դիմորդը.»,

ե. 4-րդ կետի 2-րդ ենթակետի «5-րդ կետի 6-րդ ենթակետով» բառերը փոխարինել «5-րդ կետի 5-րդ ենթակետով» բառերով,

զ. 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության «և համապատասխան դիպլոմն ստանալուն» բառերը հանել,

է. 5-րդ կետի 5-րդ ենթակետի «նախարարությանը» բառը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Օրինակելի

Ձև 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԾ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Ստեփանակերտ

«___» _____ 20 թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարար _____,

(անուն, հայրանուն, ազգանուն)

ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն) նպատակային անվճար տեղի ուսանող՝ _____

(անուն, հայրանուն, ազգանուն)

(բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը)

(այսուհետ՝ Ուսանող-շրջանավարտ)՝ ի դեմս իր ծնողի (ների), խնամակալի (ների)
հայր (խնամակալ) _____

(անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

ստորագրություն

մայր (խնամակալ) _____

(անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

ստորագրություն

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի առարկա է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանային բժշկական հաստատություններն անհրաժեշտ բժիշկ-մասնագետներով համալրելու նպատակով Ուսանող-շրջանավարտի՝ նպատակային պետական պատվերի շրջանակներում, Նախարարության կողմից ուսուցման կազմակերպումն Ուսումնական հաստատությունում անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով՝ «Բուժական գործ» մասնագիտությամբ:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ուսանող-շրջանավարտը պարտավոր է՝

1) կատարել Ուսումնական հաստատության ներքին աշխատակարգի և տվյալ մասնագիտության ուսումնառության հետ առնչվող պահանջները.

2) չկնքել ուսումնառության մասին որևէ այլ պայմանագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կամ այլ պետության պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ՝ մինչև կողմերի փոխհամաձայնությամբ սույն պայմանագրի լուծումը.

3) ուսումն ավարտելուց հետո Նախարարության հետ կնքել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի N 293-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Ձև 4 պայմանագիրը՝ _____ մասնագիտությամբ.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարել հատուցում Ուսումնական հաստատությունում վճարովի համակարգում տվյալ ծրագրով ուսուցման համար սույն պայմանագրի կնքման պահին ուսման ամբողջ ժամանակահատվածի համար սահմանված վճարի չափով՝ ուսման փաստացի տևողության ողջ ժամանակահատվածում իրեն վճարված կրթաթոշակի ողջ ծավալով (եթե Ուսանող-շրջանավարտին վճարվում է կրթաթոշակ) և վճարել տուգանք ուսման վճարի 30 տոկոսի չափով, եթե

ա. ինքնակամ դադարեցնում է ուսումը,

բ. հեռացվում է Ուսումնական հաստատությունից:

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անվան, ազգանվան, հայրանվան կամ անձնագրային տվյալների փոփոխման դեպքում տասն օրվա ընթացքում տեղեկացնել Նախարարությանը:

3. Նախարարությունը պարտավոր է Ուսանող-ըրջանավարտի կողմից ուսումն ավարտելուց և բժշկի որակավորում ու համապատասխան դիպլոմ ստանալուց հետո կնքել մասնագիտացման մասին Որոշմամբ հաստատված Ձև 4 պայմանագիրը:

4. Ուսանող-ըրջանավարտն իրավունք ունի Ուսումնական հաստատությունն ավարտելուց և բժշկի որակավորում ու համապատասխան դիպլոմ ստանալուց հետո պահանջի հայցով դիմել դատարան, եթե Նախարարությունը հրաժարվում է կնքել Որոշմամբ հաստատված Ձև 4 պայմանագիրը:

5. Նախարարությունն իրավունք ունի պահանջել սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները:

III. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Սույն պայմանագրով նախատեսված մասնագիտությունը սահմանվում է Նախարարության կողմից:

7. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

8. Բոլոր այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ կամ դատական կարգով:

10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Սույն պայմանագիրը կնքված է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի մեկ օրինակը տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

12. Կողմերի հասցեներն ու վավերապայմանները՝

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂ-ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

_____ անուն, ազգանուն
_____ հասցե
_____ ստորագրություն, կնիք

_____ անուն, ազգանուն
Անձնագիր _____
Տրված է երբ, ում կողմից _____
Ծննդավայր _____
Բնակության հասցե _____
_____ ձեռ. _____

»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 499-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ
«ԻՎԱՆՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ
«ԳԻՇՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին և «Նախադպրոցական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործառնությունների իրականացումն է:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե», «է» կետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները համապատասխանաբար վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի և Մարտունու շրջանների վարչակազմերին:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի և Մարտունու շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել՝

ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը,

բ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 27-ի N 131 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, և այն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման.

2) ձևավորել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մարմինները և ապահովել դրանց գործունեությունը:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N1 հավելվածի 09 բաժնի 1 խմբի 1 դասի «03 Նախադպրոցական հիմնարկներ» ծրագրով նախատեսված գումարից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի և Մարտունու շրջանների վարչակազմերին հատկացնել համապատասխանաբար 6 608 500 (վեց միլիոն

վեց հարյուր ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի «Իվանյանի պետական մանկապարտեզ» և Մարտունու շրջանի «Գիշու պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների չորս ամսվա պահպանման ծախսերը հատուցելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 500-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 900-Ն որոշման N2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋՈՒՄ
 ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015
 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	1		Նախադպրոցական կրթություն	-	-	-	24102.9
		1	Նախադպրոցական կրթություն	-	-	-	24102.9
		03	Նախադպրոցական հիմնարկներ	-	-	-	24102.9
			ԼՂՀ կառավարություն	-	-	-	(5397.8)
			Ստեփանակերտի քաղաքապետարան	-	-	-	9225.8
			Ասկերանի շրջանի վարչակազմ	-	-	-	6608.5
			Հաղրուծի շրջանի վարչակազմ	-	-	-	7057.9
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	-	-	6608.5
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(24102.9)
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(24102.9)
		01	Պետական աջակցություն ԼՂՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	-	-	(24102.9)
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	-	(24102.9)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 501-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋՐԱԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, իսկ գործողությունը տարածվում է 2016 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶՐԱԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ**

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2016 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
- II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԵՒԱՆԻՉՍԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ
- IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու և մթերքների առատությունն ստեղծելու գործում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը:

2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման, ոռոգման ջրի և ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման գործում կարևոր նշանակություն ունի ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը, ջրման նոր տեխնոլոգիաների ներդրումը և ինքնաշխատ կառավարման համակարգերի ստեղծումը:

3. Գյուղատնտեսության մեջ կիրառվում են ջրման տարբեր եղանակներ: Ներկայումս առավել արդյունավետ և ընդունելի են կաթիլային և անձրևացման ոռոգման համակարգերը (այսուհետ՝ ջրախնայողական տեխնոլոգիաներ): Կաթիլային ոռոգման ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ առանձին փոքր մակերեսներով կատարվում է հողի տեղայնացված խոնավացում անմիջապես յուրաքանչյուր բույսի արմատաբնակ տարածքում:

4. Բազմաթիվ ուսումնասիրությունների և հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կաթիլային ոռոգման եղանակի կիրառությունն ունի այնպիսի առավելություններ, ինչպիսիք են՝ 30-60 տոկոսով ոռոգման ջրի տնտեսում, 20-50 տոկոսով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացում և ստացվող բերքի որակի բարձրացում, մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազում: Կաթիլային ոռոգման համակարգերը հնարավոր է կիրառել մեծ թեքությամբ, բարդ ռելիեֆ ունեցող ցանկացած տեղանքում: Լիովին բացառվում է հողի իրիզացիոն էռոզիայի վտանգը, մակերեսը չի կեղևակալում, մնում է փխրուն, գրունտային ջրերի մակարդակը մնում է անփոփոխ, հնարավորություն է ստեղծվում ավտոմատացնել ջրաբաշխման և ջրման գործընթացները: Ջրման այս եղանակը կարող է ապահովել մեծ եկամտաբերություն և կարճ ժամանակահատվածում (երկուսից երեք տարի) արդարացնել ներդրումները:

5. Անձրևացման գլխավոր տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ տեղի է ունենում ոչ միայն հողի, այլև գետնամերձ օդի շերտի խոնավացում, ինչի շնորհիվ նվազում է գոլորշիացումը հողի և բույսի մակերեսից: Միևնույն ժամանակ առկա են որոշակի թերություններ, օրինակ՝ քամու մեծ արագության դեպքում հնարավոր չէ կատարել անձրևացում, և անձրևացման համակարգը ոչ բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի համար է նպատակահարմար:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացվում են ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման համար իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի նպատակն է ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում տարբեր կուլտուրաների ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների ավելացումը և նպաստել գյուղատնտեսությանը զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակի բարձրացմանը:

8. Ծրագրի խնդիրներն են

1) ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործումը, ոչ ավանդական մշակաբույսերի ներդրումը և անցումը ինտենսիվ գյուղատնտեսության:

2) վնասակար օրգանիզմների և մոլախոտային բուսականության տարածման հավանականության նվազումը:

3) հողի պահպանությունն և արդյունավետ մշակման մակարդակի ապահովումը:

4) գյուղատնտեսական արտադրության զարգացումն ու շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանումը:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրի իրականացման գործընթացը:

10. Հողօգտագործողները նախարարության կողմից սահմանված ժամկետում նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն ձևի՝ նշելով ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման հնարավորությունները և պայմանները, գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ջրախնայողական տեխնոլոգիաներ տեղադրելու նպատակով նախարարություն դիմած հողօգտագործողների ներկայացրած հայտերի ուսումնասիրման, ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման համար անտոկոս փոխառությամբ տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման և իրականացրած աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում է մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

12. Հանձնաժողովը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո տասնհինգօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, ջրախնայողական տեխնոլոգիաներ տեղադրելու հնարավորությունները և պայմանները, տվյալ հողատարածքում ոռոգման ջրի առկայությունը և ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) ներկայացնելու նպատակով:

13. Հանձնաժողովը փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետից հետո քսանօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, ընդհանրացնում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ) է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը, նշելով անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը և այդ գումարի՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, պետական բյուջե վերադարձման ժամկետները՝ ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման համար անհրաժեշտ գումարի անտոկոս փոխառության տեսքով տրամադրումն (այսուհետ՝ գործընթաց) ապահովելու նպատակով:

14. Հիմնադրամը հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկի հիման վրա ապահովում է գործընթացի իրականացումը՝ հողօգտագործողների հետ կնքելով անտոկոս փոխառության պայմանագրեր:

15. Անտոկոս փոխառության պայմանագրերը կնքվում են փաստաթղթերով նախատեսված կաթիլային կամ անձրևացման ոռոգման համակարգի արժեքի 50 տոկոսի չափով, իսկ արժեքի մնացած 50 տոկոսի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից:

16. Հիմնադրամը սույն Ծրագրի 14-րդ կետում նշված գործողությունները կատարելուց հետո, տասնհինգօրյա ժամկետում նախարարություն է ներկայացնում տեղեկություններ կատարած աշխատանքների մասին:

17. Անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարի ոչ նպատակային օգտագործման դեպքում այն վաղաժամկետ ենթակա է վերադարձման պետական բյուջե:

18. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է տվյալ տարվա պետական բյուջեով «Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանում» միջոցառմամբ նախատեսված միջոցներով:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ

19. Սույն Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

- 1) անցում ինտենսիվ գյուղատնտեսության.
- 2) ոռոգման ջրի տնտեսում, ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործում.
- 3) նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացում.
- 4) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացում և ստացվող բերքի որակի բարձրացում.
- 5) մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում:

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(Ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Մշակվող կուլտուրայի տեսակը _____

Մշակվող հողատարածքի մակերեսը _____

Հայտին կից ներկայացվում են՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

Լրացուցիչ տեղեկություններ _____

(անուն, ազգանուն)

(ստորագրությունը)

« ____ » _____ 20__ թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ -ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 502-Ն

ք.Ստեփանակերտ

**ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՄԱՍԱԿԱՐԱՐՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ
ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԻ ՍՈՒԲՄԻՂԱՎՈՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 54-Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՄՍՏԱԿԱՐԱՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱԽՍՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԻ ՍՈՒԲՄԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) *մեխանիկական ոռոգման համակարգ*՝ արտեզյան ջրհորներ, պոմպակայաններ, խողովակաշարեր՝ շենքերով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով (այսուհետ՝ համակարգ):

2) *շահագործող-ջրօգտագործող*՝ իր գյուղատնտեսական արտադրությունը վարող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով մեխանիկական եղանակով ոռոգման համար շահագործում է ջրամատակարարի կողմից չշահագործվող համակարգ:

3) *ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման միջոցառման մասնակից*՝ միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

4) *ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորում*՝ մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի լրիվ կամ մասնակի չափով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում:

5) *ոռոգման ջուր*՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար նախատեսված և ոռոգման ջրի ստանդարտներին համապատասխանող ջուր:

6) *ջրամատակարար*՝ ջրառ իրականացնող, ջուրն ամբարող և (կամ) ջրօգտագործողներին մատակարարող անձ:

7) *ջրօգտագործող (հետագայում՝ բաժանորդ)*՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով հանդիսանում է ջրամատակարարի հետ ջրօգտագործման պայմանագիր կնքած անձ:

II. ՍՈՒԲՄԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմիններն իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) վերահսկում է միջոցառումների իրականացման գործընթացը:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի ներկայացուցիչը մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման գործընթացի ապահովման համար գույքագրում է շրջանում գործող ջրամատակարարի կողմից չշահագործվող համակարգերը՝ նշելով համայնքը, տեղանքը, շահագործող-ջրօգտագործողին, պոմպի հզորությունը, ինչպես նաև դրանց տակ մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքների մակերեսը:

4. Մեխանիկական եղանակով իրականացվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգում իրականացնելու ցանկություն ունեցող բաժանորդները ոռոգման ջրի հայտեր են ներկայացնում ջրամատակարարին և նրանց հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագրեր են կնքվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ շահագործող-ջրօգտագործողները ոռոգման ջրի հայտերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմին՝ համաձայն N 1 ձևի:

5. Շահագործող-ջրօգտագործողը և համապատասխան շրջանի վարչակազմի ներկայացուցիչները, յուրաքանչյուր ամիս մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 7-ը, հիմք ընդունելով շահագործող-ջրօգտագործողների կողմից ներկայացված ոռոգման ջրի հայտերը, կատարում են շահագործող-ջրօգտագործողի կողմից օգտագործած ջրի ծավալի, դրա դիմաց վճարման ենթակա գումարի չափերի գրառում ոռոգման ջրի հանձնման-ընդունման ակտում (այսուհետ՝ ակտ)՝ համաձայն N 2 ձևի:

6. Մատակարարված ջրի ծավալի դիմաց ծախսված էլեկտրաէներգիայի քանակը հաշվարկվում է՝ համաձայն համակարգում տեղադրված պոմպերի հզորության և համակարգերին կից ենթակայանների վրա տեղադրված էլեկտրաէներգիայի քանակը հաշվառող սարքերի միջոցով՝ ըստ գործող սակագների:

7. Սույն կարգի 5-րդ կետում նշված ակտը շահագործող-ջրօգտագործողի կողմից մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներկայացվում է համապատասխան շրջանի վարչակազմ:

8. Համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարը և ջրամատակարարը մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 15-ը ամփոփ տեղեկություններ են ներկայացնում նախարարություն՝ համաձայն N 3 ձևի:

9. Մեխանիկական ոռոգման համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման համար հիմք են հանդիսանում սույն կարգի 8-րդ կետում նշված՝ նախարարություն ներկայացված տեղեկությունները:

10. Ոռոգման ջրի ծավալը որոշվում է գյուղատնտեսական մշակաբույսերի համար հաստատված ջրման ու ոռոգման նորմերի հիման վրա՝ համաձայն աղյուսակի:

11. Սուբսիդավորման ենթակա է շահագործող-ջրօգտագործողի համար անհատական համակարգից մատակարարվող 1 խորանարդ մետր ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի և ինքնահոս եղանակով ոռոգման 1 խորանարդ մետր ջրի սակագնի տարբերությունը, իսկ ջրամատակարարի համար՝ համակարգից մատակարարվող 1 խորանարդ մետր ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը ամբողջությամբ՝ ներառյալ նախարարության կողմից տվյալ համակարգերում հաշվարկված կորուստները:

12. Գյուղատնտեսական մշակաբույսերի համար հաստատված ջրման ու ոռոգման նորմերից և նախարարության կողմից տվյալ համակարգերում հաշվարկված կորուստներից ավել ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը սուբսիդավորման ենթակա չէ:

13. Սուբսիդավորումը կատարվում է՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից սահմանված ինքնահոս եղանակով ոռոգման ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը:

14. Նախարարությունը, սույն կարգի 8-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո մինչև տվյալ ամսվա 20-ը ընդհանրացնում և դրանց հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում համապատասխան հայտ:

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ սույն կարգի 14-րդ կետում նշված հայտը ստանալուց հետո, մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցներից սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ:

16. Նախարարությունը, ֆինանսական միջոցները ստանալուց հետո դրանք տրամադրում է շահագործող-ջրօգտագործողին և ջրամատակարարին՝ սույն կարգի 11-րդ կետում նշված, բաժանորդի կողմից մեխանիկական ոռոգման համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման համար:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձև N 1

**ՀԱՅՏ
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ**

1. _____
(շահագործող-ջրօգտագործողի Ա.Ա.Հ., անվանումը, հեռախոսահամարը)

2. _____
(հասցեն)

3. _____
(անձնագրային տվյալները, եթե իրավաբանական անձ է՝ պետական ռեզիստորում գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ծածկագիրը)

4. _____
(հողամասի սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի տվյալները)

5. _____
(ջրառ կատարելու տեղանքը, ծավալը)

6. _____
(մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը)

7. _____
(ոռոգվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկը)

(ստորագրությունը)
Կ. Տ.

(շահագործող-ջրօգտագործողի Ա.Ա.Հ., անվանումը)
Կ. Տ.

**ԱԿՏ
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

_____ ամսվա համար, _____ 20 թ.

Հ/հ	Շահագործող-ջրօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը	Համայնքը, պետական պահուստային ֆոնդը, մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը	Ոռոգվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկը	Ոռոգվող հողատարածքը ընդամենը (հա)	Մեկ ամսում մատակարարված ջրի ծավալը (խ.մ.)	Ջրի արժեքը (ՀՀ դրամ)	Շահագործող-ջրօգտագործողի ստորագրությունը
1							
2							
3							
4							
5							

_____ **Չրջանի վարչակազմի ներկայացուցիչ**

_____ (շահագործող-ջրօգտագործող)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼՂՀ _____ ՀՐՁԱՆ (_____ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)

Հ/հ	Համայնքը, պետական պահուստային ֆոնդը	Մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը	Շահագործող-ջրօգտագործողի (բաժանորդի) անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը	Պտմանի հզորությունը (կՎտ)	1 խ.մ. ջրի համար ծախսված էլեկտրաէներգիա (կՎտ)	Ընդամենը մատակարարված ջրի ծախսը (մ³)	Ջրի ծախսը ըստ ոռոգման նայրմերի (մ³)	Ոռոգվող հողատարածքը ընդամենը (հա)	Այլ թվում																					
									աշնանացան ցորեն	եգիպտացորեն	արևածաղիկ	կարտոֆիլ	ծխախոտ	բանջար-տատան	տարխալ	վեցու պեր	պտուղաբուս	բամբակ	կտուրածու	տխալ										
Ընդամենը																														

շրջանի վարչակազմի ղեկավար (Ջրամատակարար)

 (ստորագրություն)

ՆՈՐՄԵՐ
ԼՂՀ ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ,
ՄԻՋԱԿ ԿԱՎԱ-ԱՎԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՎԱԶԱ-ԿԱՎԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԳՑՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ
ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՋՐՄԱՆ ՈՒ ՈՌՈԳՄԱՆ

Շովի մակարդակից մինչև 500 մետր բարձրություն

Հ/հ	Մշակաբույսը	Ջրումների քանակը	Ջրման նորմը մ ³ /հա	Ոռոգման նորմը մ ³ /հա
*1	Աշնանացան ցորեն	4	850	3400
*2	Եգիպտացորեն	4	750	3000
3	Արևածաղիկ	5	700	3500
4	Կարտոֆիլ (վաղահաս)	5	650	3250
5	Ծխախոտ	12	650	7800
6	Բանջարաբուստանային	16	500	8000
7	Առվույտ	7	900	6300
8	Խաղողի այգի	5	1100	5500
9	Պտղատու այգի	5	1000	5000
10	Բամբակ	5	750	3750
11	Կտավատ	2	800	1600
12	Մոյա	3	600	1800

Շովի մակարդակից 500-900 մետր բարձրություն

Հ/հ	Մշակաբույսը	Ջրումների քանակը	Ջրման նորմը մ ³ /հա	Ոռոգման նորմը մ ³ /հա
*1	Աշնանացան ցորեն	3	850	2550
*2	Եգիպտացորեն	3	750	2250
3	Արևածաղիկ	4	700	2800
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	600	2400
5	Ծխախոտ	10	600	6000
6	Բանջարաբուստանային	12	450	5400
7	Առվույտ	5	900	4500
8	Խաղողի այգի	4	1100	4400
9	Պտղատու այգի	4	1000	4000
10	Կտավատ	1	800	800
11	Մոյա	2	600	1200

Շովի մակարդակից 900 մետրից բարձր

Հ/հ	Մշակաբույսը	Ջրումների քանակը	Ջրման նորմը մ ³ /հա	Ոռոգման նորմը մ ³ /հա
*1	Աշնանացան ցորեն	2	800	1600
*2	Եգիպտացորեն	3	700	2100
3	Արևածաղիկ	3	700	2100
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	550	2200
5	Ծխախոտ	6	550	3300
6	Բանջարաբուստանային	8	450	3600
7	Առվույտ	4	800	3200
8	Խաղողի այգի	-	-	-
9	Պտղատու այգի	3	1000	3000
10	Կտավատ	1	750	750
11	Մոյա	1	600	600

Օսնություն աշնանացան ցորենը և եգիպտացորենը խորքային հորերից ոռոգվելու դեպքում ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը սուբսիդավորման ենթակա չէ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 503-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 261-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 262-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 663-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 31-ի N 538 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 261-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 20-21-րդ, 26-27-րդ կետերից հանել «և էկոնոմիկայի» բառերը.

2) 23-րդ կետում «նվազագույն աշխատավարձի» բառերը փոխարինել «նվազագույն ամսական աշխատավարձի» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Հարմար աշխատանքի պայմանները բնութագրող չափանիշները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 31-ի N 539 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 262-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետից հանել «, այդ մասնագիտությամբ (որակավորմամբ) առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ ունեցող» բառերը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի ««Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտեր սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 663-Ն որոշմամբ սահմանված՝

1) N 6 հավելվածի 22-23-րդ, N 8 հավելվածի 15-16-րդ, N 9 հավելվածի 17-18-րդ, N 11 հավելվածի 17-18-րդ, 37-38-րդ, N 12 հավելվածի 14-15-րդ, N 13 հավելվածի 21-22-րդ, N 14 հավելվածի 10-11-րդ կետերից հանել «և էկոնոմիկայի» բառերը.

2) N 8 հավելվածի 3-րդ կետում «երեք տարվա» բառերը փոխարինել «հինգ տարվա» բառերով.

3) N 11 հավելվածի 35-րդ կետում «կասեցման, վերականգնման» բառերը փոխարինել «դադարեցման» բառով.

4) N 13 հավելվածի 16-րդ կետում «գործակալության» բառը փոխարինել «նախարարության» բառով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 504-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 722 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Չաշխատող կանանց համար հղիության և ծննդաբերության նպաստ սահմանելու մասին» N 722 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «կանանց համար հղիության և ծննդաբերության նպաստ» բառերը փոխարինել «անձին մայրության նպաստ, մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը» բառերով.

2) որոշման նախաբանում «կանանց» բառը փոխարինել «անձանց» բառով.

3) որոշման 1-ին կետում «ԼՂՀ-ում մշտական հաշվառում ունեցող չաշխատող կանանց» բառերը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված չաշխատող անձին» բառերով, իսկ «հատկացվում է հղիության և ծննդաբերության» բառերը՝ «նշանակվում և վճարվում է մայրության» բառերով.

4) որոշման 2-րդ կետում «Հաստատել չաշխատող կանանց հղիության և ծննդաբերության նպաստ հատկացնելու» բառերը փոխարինել «Մահմանել չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու» բառերով.

5) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 1-ից և տարածվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ին և դրանից հետո ծագած իրավահարաբերությունների (այն դեպքերի, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունքն առաջացել է 2016 թվականի սեպտեմբերի 1-ին և դրանից հետո) վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՉԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԻՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են չաշխատող անձին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մայրության նպաստ (այսուհետ՝ նպաստ) նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները:

2. Նպաստ նշանակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության վայրի հասցեով հաշվառված՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող (նաև՝ հանրային ծառայող) կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձին.

2) հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձին.

3) հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող հանդիսացած անձին, եթե «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված մայրության նպաստը վճարվել է հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի ոչ բոլոր օրերի համար (կամ վճարված մայրության նպաստը վերահաշվարկվել և հետ է պահվել)՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու (որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետն ավարտվելու) հիմքով, բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվելու դեպքի.

4) հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնված անձին, եթե նա քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից հանվել է մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածն ավարտվելը՝ 65 տարին լրանալու կամ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրանալու, կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու, կամ «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու հիմքով:

3. Սույն կարգի իմաստով հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատված է համարվում՝

1) հղիության 210-րդ օրից հետո ծննդաբերած անձի համար՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով աշխատող կանանց համար սահմանված հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածը, որը կազմում է 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), անկախ ծնված երեխաների թվից և ծննդաբերությունը բարդ լինելուց.

2) հղիության 154-րդ օրը և 154-րդ օրից հետո՝ մինչև հղիության 210-րդ օրը, վաղաժամ ծննդաբերած (ներառյալ այն դեպքը, երբ երեխան ծնվել է մահացած) անձի համար՝ ծննդաբերելու օրվանից 70 օր, անկախ ծնված երեխաների թվից և ծննդաբերությունը բարդ լինելուց.

3) նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված անձի համար՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը՝ անկախ որդեգրված կամ խնամարկյալ նորածինների թվից:

4. Չաշխատող փոխնակ (սուրոգատ) մորը նպաստ վճարվում է ընդհանուր հիմունքներով, իսկ փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի չաշխատող կենսաբանական մորը նպաստ չի վճարվում:

5. Նպաստ նշանակելու և վճարելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալության՝ սույն կարգի 2-րդ կետում նշված անձի (այսուհետ՝ շահառու) հաշվառման կամ փաստացի բնակչության վայրը սպասարկող տարածքային բաժին (այսուհետ՝ տարածքային բաժին) է ներկայացվում՝

1) գրավոր դիմում, որում պարտադիր նշվում են շահառուի ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, հաշվառման և փաստացի բնակչության վայրի հասցեն.

2) բժշկական կազմակերպության կողմից շահառուին տրված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում՝ անաշխատունակության թերթիկի պատճենը՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) գործատուի կողմից:

3) շահառուի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածում նշված անձը հաստատող փաստաթուղթը (այսուհետ՝ անձը հաստատող փաստաթուղթ) և դրա պատճենը:

4) շահառուի հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը:

5) շահառուի կողմից ստորագրված՝ սույն կարգի 2-րդ կետում նշված անձանց թվին պատկանելու մասին հայտարարություն, որում պարտադիր նշվում են չաշխատող անձի ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հայտարարությունը ստորագրելու օրը, ամիսը, տարին:

6. Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում ներկայացվում է նաև գործատուի տված տեղեկանքը, որում նշվում է՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում տվյալ վարձու աշխատողի համար աշխատավարձ կամ օրենքով սահմանված նպաստ չհաշվարկելու, կամ հաշվարկված աշխատավարձի, օրենքով սահմանված նպաստ և դրանից հաշվարկված եկամտային հարկի չափերի մասին:

2) աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերի մասին:

3) պետական բյուջեի նկատմամբ տվյալ վարձու աշխատողին պարտավորություններ չունենալու կամ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ կատարված լինելու մասին:

7. Սույն կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքում ներկայացվում է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տված տեղեկանքը՝ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու ժամկետների, քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից հանվելու հիմքերի, ինչպես նաև հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում շահառուին վճարված վարձատրության և դրանից հաշվարկված եկամտային հարկի չափերի մասին:

8. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում ներկայացվում է նաև վաղաժամ ծննդաբերելու մասին փաստաթուղթ:

9. Շահառուին նպաստ նշանակելու համար կարող է գրավոր դիմում ներկայացնել նաև այլ անձ: Այս դեպքում, սույն կարգի 5-րդ կետի 2-5-րդ ենթակետերում և 6-8-րդ կետերում նշված փաստաթղթերից բացի դիմող անձը ներկայացնում է նաև իր անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը:

10. Նպաստը նշանակվում է, եթե գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացվել են հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

11. Սույն կարգի 5-8-րդ կետերում նշված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, տարածքային բաժինը որոշում է՝

1) մերժել նպաստ նշանակելը, կամ,

2) նշանակել և վճարել նպաստը:

12. Տարածքային բաժինը մերժում է նպաստ նշանակելը, եթե՝

1) անձը չունի նպաստի իրավունք, կամ,

2) գրավոր դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, կամ գրավոր դիմումում չեն ներառվել անհրաժեշտ տվյալները, կամ,

3) անձին պետք է նշանակվի և վճարվի օրենքով սահմանված մայրության նպաստ, կամ,

4) գրավոր դիմումը ներկայացվել է սույն կարգի 10-րդ կետում նշված ժամկետից հետո, կամ,

5) անձը բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության վայրի հասցեով:

13. Տարածքային բաժինը, սույն կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում, որոշումն ընդունելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է շահառուին: Եթե տարածքային բաժինը որոշման մասին տեղեկացնում է փոստային ծառայության միջոցով, ապա որոշումն ուղարկվում է բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շահառուի բնակչության վայրի հասցեով:

14. Սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում տարածքային բաժինը նպաստը վճարում է շահառուին՝ հարկային գործակալի պարտավորություններից ազատված գործատուի մոտ վարձու աշխատողների օրենքով սահմանված մայրության նպաստի վճարման համար սահմանված ժամկետում և կարգով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ միանվագ դրամական հատուցումների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած բանկի միջոցով:

15. Նշանակված, սակայն շահառուի մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը ենթակա է ժառանգման:

16. Նպաստի չափը հաշվարկվում է ՆՆԱ-ԳԱ բանաձևով, որտեղ՝

Ն-ն՝ նպաստի չափն է,

ՆԱ-ն՝ նպաստի առավելագույն չափն է, որը կազմում է 253 000 ՀՀ դրամ, իսկ հղիության 154-րդ օրը և 154-րդ օրից հետո՝ մինչև հղիության 210-րդ օրը, վաղաժամ ծննդաբերած անձի, նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված անձի համար՝ 126 500 ՀՀ դրամ,

ԳԱ-ն՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործատուի հաշվարկած աշխատավարձի (դրան հավասարեցված եկամուտների), օրենքով սահմանված նպաստի, քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի հաշվարկած վարձատրության և դրանցից հաշվարկված եկամտային հարկի տարբերությունն է՝ պետական բյուջեի նկատմամբ տվյալ անձի պարտավորություններն ամբողջությամբ կատարվելուց հետո:

17. Բարդ ծննդաբերության, ինչպես նաև միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքերում նպաստի չափը հաշվարկելու բանաձևը չի փոխվում:»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 505-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԿԱՄ ՄԱՀԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԿԱՄ
ՀԱՇՄԱՆԴԱՄ ՃԱՆԱԶՎԱԾ՝ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԶԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ՝

1) կամավորական է համարվում 2016 թվականի ապրիլի 1-ից հետո Ադրբեջանի Հանրապետության կողմից 1994 թվականի զինադադարի համաձայնագրի խախտման հետևանքով տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողությունների շրջան մեկնած՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող անձը.

2) էթե կամավորականը գոհվել (մահացել), անհայտ կորել կամ մահվան պատճառ հանդիսացած կամ հաշմանդամություն առաջացրած վնասվածքը կամ խեղումը ստացել է հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, ապա գոհված (մահացած) կամ անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամի, հաշմանդամ ճանաչված կամավորականի սոցիալական պաշտպանությունն իրականացվում է, համապատասխանաբար, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողի, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած զինծառայողի ընտանիքի անդամի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

3) էթե կամավորականը մահացել, անհայտ կորել կամ մահվան պատճառ հանդիսացած կամ հաշմանդամություն առաջացրած վնասվածքը կամ խեղումը ստացել է սույն կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքների հետ չկապված պայմաններում (սակայն մարտական գործողությունների շրջանում), ապա մահացած կամ անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամի, հաշմանդամ ճանաչված կամավորականի սոցիալական պաշտպանությունն իրականացվում է, համապատասխանաբար, զինվորական ծառայության ընթացքում մահացած զինծառայողի ընտանիքի անդամի և զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ ճանաչված զինծառայողի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

4) սույն կետի 2-3-րդ ենթակետերում նշված գոհված (մահացած), անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամի, հաշմանդամ ճանաչված կամավորականի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմի «ավագ սերժանտ» զինվորական կոչում և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող՝ զինվորական ծառայության ընթացքում գոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի կամ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ ճանաչված զինծառայողի համար սահմանված կարգով:

2. Զոհված (մահացած) կամ անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամին, հաշմանդամ ճանաչված կամավորականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 20-ի N 211 որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված տեղեկանքը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 10-Ն որոշման 1-ին կետի 2-3-րդ ենթակետերով սահմանված տեղեկանքները տրամադրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինվորական կոմիսարիատը:

3. Կամավորականի բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշման 1-ին կետի 2-3-րդ ենթակետերում նշված՝ վնասվածք կամ խեղում ստացած և հետագայում մահացած կամավորականի մահվան պատճառական կապը որոշվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի N 507 որոշմամբ հաստատված կարգով: Ընդ որում, այս դեպքում, բժշկասոցիալական փորձաքննության մարմինը սույն որոշման 1-ին կետի 2-3-րդ ենթակետերում նշված հանգամանքների հետ մահվան պատճառական կապ է սահմանում, եթե մահվան պատճառ են հանդիսացել սույն որոշման 1-ին կետում նշված վնասվածքը կամ խեղումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 506-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 889-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների զավակներին, փախստականներին և բազմազավակ, միաձնող ընտանիքներին հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ, բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 889-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 7-րդ ենթակետում «15» թիվը փոխարինել «10» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2016թ.

N 507-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 380 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ը ը ը զ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման կարգը հաստատելու մասին» N 380 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի՝

1) «համաձայնությունը» բառը փոխարինել «թույլտվությունը» բառով.

2) «ա» ենթակետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարությունը» բառերը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը» բառերով.

3) «բ» ենթակետից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման թույլտվության ձևը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ